

դայն կրօնական մոլեռանդութեամբ, յաջողութեան մը չէ հասած :

Հայկական կոտորածներու ժամանակ՝ Քիւրդերու մաս մը նայած պարագային կը թալանէր և կ'սպաննէր. ուրիշ մաս մը առանց ի նկատի ունենալու դէպքերու քաղաքական բնոյթը, դրամ կ'ստանար և մարդ կը փոխադրէր սահմանազխէն անդին, ասոնցմէ ամեն մէկը ի նկատի ունէր առանձնապէս շահու լայն ասպարէզ մը :

Բացի այս աշխարհածանօթ իրողութենէն՝ այնու ամենայնիւ մենք տանք քանի մը ասպացոյցներ :

Առևտրականները երկար ժամանակ գործ ունենալով քիւրդերու նկատմամբ, ուսումնասիրիչ են և շարունակ կուսումնասիրեն քիւրդի հոգեբանութիւնը՝ վաճառման գործի մէջ զանոնք համոզելու և հաւատ ներշնչելու համար. քանի որ քիւրդը հաշիւ և հասկացողութիւն չունենալով, այս պարագային հաւատալու ստիպողականութեան տակ պիտի մնայ առանց այլ և այլի : Եւ անա պատճառը որ ստեղծած են, և շարունակ կ'ըստեղծեն նոր հաւատք, նոր դաւանանքներ. սրովհետեւ հիները թէ նախաքրիստոնէական, թէ քրիստոնէական, և թէ մահմեմետական՝ այլևս չեն ազդեր ազոնց վրայ :

Ամենայաջողը այն առևտրականն է որ աւելի հնարամիտ է. Դաւանանքի և հաւատքի ստեղծագործութիւնը կը կատարուի երդումով :

Առևտրականը իր վաճառքի բոլոր յատկութիւններն, օգտակարութիւնն ու աժանութիւնն բացատրելէ յետոյ, ասպացոյցներ գտնել կը պարտաւորուի. և այդ վճռական բոլակէն հանդիսաւորապէս կ'արտասանէ նոր դաւանանքը. — «ԽԵՐԿՎԻ ԱԻԼԿԵ», «ԽԵՐԿՎԵ ՆԱՆԿ» (չուկայի շահը, հացի շահը վկայ). Այս նոր դաւանանքը լսած ժամանակ, Քիւրդը կը զարմանայ ու ականջը լաւ մը կը բանայ այդ նոր զօրութեան ու հաւատալիքի մասին՝ որ լսած չունի, և որոյ մէջ իրականութիւն կը վնասուէ : Ու անա ժամը ուր առևտրականը կը դիմէ իր նորաստեղծ կրօնի ու հաւատալիքի մեկնաբանութեանը՝ կը